

տացած առաջայ երկու հատորները լոյս ընծայելիս՝ աւելի լըջ-
ջօրէն վերաբերուի իւր ընտրած նիւթին, որպէսզի այդ գրքերն
էլ չթողնեն շուտափոյթ գործի այն սպաւորութիւնը, որ կրում է
իւր վրայ ներկայ Ա հատորը։ Եւս տուաւ չարկ է լըջօրէն վե-
րաբերուել այդ գործին, քանի որ հայոց կանոնական իրաւունքի
ուսումնասիրութեամբ մեծ լոյս կարելի է սփռել հին հայոց քա-
ղաքացիական, քրէական ու պետական իրաւունքների վրայ,
որոնք իբրեւ հետազոտութեան նիւթեր աւելի աննախանձելի
պայմաններում են գտնուում։

ԻՐԱԿԱՐԱՆ.

ՎՐԱԳՅՆ ԵՋՆՆԻ ՅԻՄՆԱԲԵՆԻՐ

1904 թուի Նոյեմբերի 6-ին Ռուսաստանի մայրաքա-
ղաքի հայ հասարակութիւնը և պետական բարձր կառավարու-
թեան մի որոշ շրջանը—լուսաւորութեան նախարարութիւնը—
հանդիսաւոր կերպով տօնեցին լուսաւորութեան նախարարի խոր-
հրդի և ուսումնական կոմիտէի անդամ՝ իսկական զազանի
խորհրդական Կարապետ Յարութիւնեան Եղեանի պետական և
գրական գործունէութեան յիշամանայ յօրելեանը։

Կարապետ Եղեանը ծնուել է 1835 թ. սեպտեմբերի 5-ին,
միջնակարգ կրթութիւնն ստացել է Մոսկուայի Լազարեան ճե-
մարանում և աւարտել ոսկէ մեդալով։ Այնուհետև գնալով Պետեր-
բուրգ ուսանում է համալսարանի արեւելեան լեզուների բաժնում.
աւարտելուց յետոյ աչքի ընկնելով իւր ընդունակութեամբ և
հմտութեամբ՝ համալսարանի վարչութիւնից առաջարկութիւն է
ստանում, որ պատրաստուի պրօֆէսորութեան և հայոց լեզուի ու
գրականութեան ամբիոնը ստանձնէ։ Եղեանը պատրաստուում է և
ընտրութիւն տալով՝ արեւելեան լեզուների մաղիստրոս գիտնական
կոչումն է ստանում, բայց չգիտենք ինչ պատճառներից զրգուած,
շուտով թողնում է համալսարանը և ներքին գործոց նախարարու-
թեան մէջ պաշտօն ստանում։ Յետոյ այդտեղից փոխուում է լու-
սաւորութեան նախարարութիւնը և երկար ժամանակ ղեկարաւա-
մանով վիցէգիբրեկտօրի պաշտօնը վարելուց յետոյ նշանակուում է
նախարարի խորհրդի և ուսումնական կոմիտէի անդամ։

Կարապետ Եղեանը յայտնի է իբրեւ որոշ և հաստատուն
ուղղութեան տէր հասարակական գործիչ։ Նա կողմնակից է հայ
ազգի խաղաղ քաղաքակրթական զարգացման։ Կ. Եղեանը մի-

միայն թէօրիայով չէր այդ ուղղութիւնը զաւանձում, այլ իրապէս, գործով. նրա անխոնջ ջանքերով մեծ դպրոցական հաստատութիւններ են գոյութիւն ստացել—Սանասարեան միջնակարգ դպրոցը կարին քաղաքում, Գոգոյեան դպրոցը Նոր-Նախիջևանում, Յոֆեանեան միջնակարգ օրիորդաց դպրոցը Թիֆլիսում և այլն—Իգմիրեան գրական մրցանակարաշխութիւնը հաստատուել է Կոստանդնուպօլսում, շատ օգտակար կտակներ գրուել և ընկերութիւններ ու դպրոցներ նիւթական օժանդակութիւն ստացել: Նրա յորդորներն ու խրատները շատ հաբուսա մարդկանց կարծիքը օրօրէն են կակղացրել և շատերի անորոշ ցանկութիւններին որոշ և կենդանարար մարմնացումն տուել:

Սեդեանի այդ համոզմունքից է բղխում և այն հանգամանքը, որ նա մեծ նշանակութիւն է տուել միշտ մեր երկրի տեղագրական ու ազգագրական ուսումնասիրութեանը, ինքն անձամբ ուսումնասիրել է մեր պատմական անցեալը նաև ազգագրական տեսակէտից և վաղուց արդէն հրատարակել է ուսերէն լեզուով «Ներքին կենսը» հին Հայաստանին, —որի հայերէն թարգմանութիւնը լոյս է տեսել Պերն Պոռնանի աշխատութեամբ:—Նիւթապէս օժանդակել է նոյնպէս հանգուցեալ Ղեոնդ Ալիշեանի նշանաւոր տեղագրական վաստակներին—«Այրարատի», «Սիսուանի» և այլ չքեղ հրատարակութիւններին:

Իբրև գրական գործիչ՝ Սեդեանը հանդիսացել է լուրջ գիտնական և մասնագէտ աշխատող: Նրա գրական—պատմական հրատարակութիւնները—«Ղեոնդ պատմագիր», «Ժամանակագրութիւն Դարդելի», «Բունի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմայ» և այլն—համապատասխանում են ժամանակակից գիտնական պահանջներին: Սերոպական հրատարակութիւններից յետ լին Ֆուլ և ճոխացրած են բազմաթիւ պարզարանող ծանօթութիւններով, որից երևում է հրատարակչի հմտութիւնն ու գիտնական նախապատրաստութիւնը: Ով ուզում է պարզ գաղափար կազմել Սեդեանի գիտնական լրջութեան և տոկուն աշխատասիրութեան մասին թող կարդայ նրա նշանաւոր պատմական հետազոտութիւնը. «Պետրոս մեծի յարաբերութիւնը հայ ազգի հետ»¹⁾, որ 1898 թ. լոյս տեսաւ ուսերէն լեզուով. «Сношения Петра Великаго съ армянскимъ народомъ» Այս աշխատութիւնը ներկայացուած է Ռուսաց գիտութեանց կայսերական ակադեմիայի պատմա-լեզուաբանական բաժնին և երկու մասից է բաղկացած, առաջին մասը յառաջաբանի տեղն է բռնում և

¹⁾ Ժամբան ժամանակագրութիւն տես Ազգագրական հանգիսի Գ. գրքում:

պատմական տեսութիւն է՝ ուստաց կառավարութեան հայ ազգի հետ ունեցած յարաբերութեանը: 145 մեծադիր էջերից բաղկացած այս յառաջարանն իսկապէս ասանեութեանը դարձի առաջին կիսի հայոց պատմութեան մի հետազոտութիւն է՝ հիմնուած իսկական, պաշտօնական վաւերագրերի վրայ. հայոց պատմութեան ամենահետաքրքրական շրջաններից մէկն է նկարագրուած: Դարեր շարունակ հայերը մահմեդական ծանր լծի տակ տքնելով ու ճնշուելով մի նոր փորձ են անում քաղաքական ինքնուրոյնութիւն ձեռք բերելու քրիստոնէայ պետերի օգնութեամբ Պաշ իշխանական ցեղի սերունդ Իսրայէլ Օրին պատմական անձնաւորութիւն է զասնում... Աշխատութեան աստարագոյն մասը (512 մեծադիր էջ) կազմուած է իսկական վաւերագրերի պատճեններից, որ քրտնաշան հեղինակը քաղել է Մսակուայի գլխաւոր և Պետերբուրգի արապին գործոց նախարարութեան գիւմնատներից, Աւստրիական պալատական և պետական գիւմնատներից, բաւարական-արքայական գաղտնի պետական գիւմնատնից և այլն: Բոլոր վաւերագրերը վերաբերում են 1698—1736 թ. շրջանին. վերջին վաւերագիրը Մինաս վարդապետի գրած հաղորդագրութիւնն է դրաֆ Ս. Ա. Սալտիկովին (№ 305) և գրուած է 1736 թ. Մարտ ամսին: Բոլոր վաւերագրերը, թուով 305, դասուորուած են ժամանակագրական կարգով, որով թէ պատմական անցքերի կապն է ճշտութեամբ պահպանուած և թէ գիւրացնում է ցանկացած վաւերագրերի որոնումը: Վաւերագրերը թէն մեծ մասամբ թարգմանուած են ուսերէն, բայց կան նաև հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն և պարսկերէն լեզուով գրուած վաւերագրեր:

Յանկալի էր այս ամբողջ աշխատութիւնը հայերէն հրատարակուած տեսնել:

Եղեանն իբրև արևելագէտ անյայտ չէ նաև նւորպայում՝ միջազգային արևելագէտների կօնգրէսի պարբերաբար կրկնուող ժողովներում նա միշտ ուսւ կառավարութեան ներկայացուցիչն է լինում և զեկուցումներ պատրաստում:

Ամփոփելով մեր այս շատ համառօտ տեսութիւնը Եղեանի գործունէութեան մասին՝ կարող ենք ասել, որ նա իւր բազմակողմանի և օգտակար աշխատութեամբ՝ մեր նորագոյն պատմութեան էջերում որոշ տեղ կրճնի:

Յօթնամանամեայ ծերունի գիւմնական գործչին ցանկանում ենք դարձեալ երկար և առողջ կեանք, որպէս զի իւր զեռ չհրատարակած, բայց կարեւոր աշխատութիւնները լոյս աշխարհ հանէ:

ԻՍԱՀԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ